



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- ----- 2017 թվականի №---Ա
քաղ. Երևան

**«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի մայիսի 24-ի N198Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի համաձայն՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է կարճ կողով ծառայությունների համարների զբաղեցման թույլտվություն,

բ) Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի N235Ն որոշմամբ հաստատված՝ համարի և կողի զբաղեցման թույլտվության հատկացման և օգտագործման կանոնների 19-րդ կետի համաձայն՝ անձը կարող է զբաղեցնել միայն թույլտվությամբ հատկացված համարները,

գ) Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28-ի N287Ա որոշմամբ «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է «8288» կարճ կողով ծառայության համարը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թեժ գիծը սպասարկելու նպատակով,

դ) «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2017 թվականի օգոստոսի 17-ի գրությամբ խնդրել է փոփոխություն կատարել Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28-ի N287Ա որոշման մեջ՝ «8288» կարճ կողով ծառայության համարը փոխարինելով «8388» համարով՝ հաշվի առնելով, որ «8288» կարճ կողով ծառայության համարն օգտագործվում է Ընկերության կողմից,

ե) Որոշման համաձայն Ընկերությանը տրամադրված կարճ կողով ծառայությունների համարների զբաղեցման թույլտվության մեջ ներառված չէ «8288» կարճ կողով ծառայության համարը,

զ) Հանձնաժողովը 2017 թվականի օգոստոսի 22-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի N235Ն որոշման պահանջների

խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 22-ի NՄԿ-2190Հ գրությամբ,

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N00109/17-U13 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է իր պարզաբանումները՝ հայտնելով, որ Որոշման նախագծի քննարկման ժամանակ՝ բաժանորդներին կոմերցիոն նպատակներով տրամադրված համարային շարքերի ճշգրտման ընթացքում, «Մեկասս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2016 թվականի ապրիլի 25-ին հատկացված «8288» համարը չի ներառվել Ընկերության կողմից օգտագործվող համարների շարքում, քանի որ բաժանորդի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու պատճառով «8288» համարը հայտնվել է «կասեցված» (suspend) կարգավիճակում, և զբաղեցված համարների ներբեռնման ժամանակ այն չի արտացոլվել գործող համարների բազայում: Հարուցված վարչական վարույթի կապակցությամբ Ընկերությունը հայտնում է, որ չի խախտել Հանձնաժողովի իրավական ակտի պահանջներն այն հիմնավորմամբ, որ «8288» համարը Ընկերության կողմից բաժանորդի փաստացի օգտագործմանն է հանձնվել 2016 թվականի ապրիլ ամսին, այսինքն՝ մինչև Որոշման ընդունումը և ուժի մեջ մտնելը՝ ուստի խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը,

ը) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի NԱԲ-2405Հ գրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել «8288» համարի «կասեցված» (suspend) կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածի, դրա հետագա ակտիվացման վերաբերյալ տեղեկություններ և հիմնավորումներ, ինչպես նաև «8003», «8005», «8081» և «8086» համարների մասով կնքված պայմանագրերի պատճենները և 10 օրով երկարաձգվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

թ) Ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N243/17-U11 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «8086» համարի մասով Ընկերությունը 2017 թվականի մայիսի 10-ին «ՍիԷջԷս Վերիսել Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագիր,

ժ) «8086» համարը ևս ներառված չէ Ընկերությանը տրամադրված կարճ կողով ծառայությունների համարների զբաղեցման թույլտվության մեջ,

ժա) Ընկերությունն իր 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N00124/17-U13 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով հարուցված վարչական վարույթի շրջանակում 2017 թվականի սեպտեմբերի 26-ին Հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումները՝ հայտնում է, որ վարույթի առարկա վրիպումը գուտ մարդկային գործոնի հետևանք է, և կձեռնարկի համապատասխան միջոցներ նման վրիպումները հետագայում բացառելու ուղղությամբ՝ միաժամանակ խնդրելով հարուցված վարչական վարույթի քննարկման ընթացքում հաշվի առնել նշվածը,

ժբ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի N235Ն որոշմամբ հաստատված՝ համարի և կողի զբաղեցման թույլտվության հատկացման և օգտագործման կանոնների 19-րդ

կետը՝ թույլտվությամբ չհատկացված «8288» և «8086» համարներով մատուցելով հեռախոսակապի ծառայություններ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 63-րդ հոդվածի 4-րդ մասը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի N235Ն որոշման պահանջնի խախտման համար Ընկերությանը ենթարկել տույժի՝ 1 000 000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
 - 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
----- 2017թ.